ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-22-9/47-11 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21.11.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, ով գործում է «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 17.10.2022թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-22-9/47-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 191 520 (մեկ հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում ոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Շիրակի 1/68
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Այ Դի Բանկ»
Հ/Հ 900011144129	Հ/Հ 11815019046000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02606482
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Մ. ՄԱՑԱԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-9/47-11 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի							
չ/հ	CPV անվանումը	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2022թ. չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 12.12.2022թ.
8	ամինոֆիլին r03da05	ամինոֆիլին aminophylline	հատ	1600	42.50	68 000	1600
62	նիտրոֆուրանտոյին j01xe01	նիտրոֆուրանտոին, nitrofurantoin	հատ	6400	4.90	31 360	6400
86	կատվախոտի հանուկ N05CM09	կատվախոտի թանձր հանուկ valerian thick extract	հատ	32000	2.88	92 160	32000
Ընդամենը						191 520	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-9/47-11 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի				
չ/հ	CPV կոդը	CPV անվանումը	անվանումը	վճարումը նախատեսվում է իրականացնել 2022թ., չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2022թ.
8	33671114/2	ամինոֆիլին r03da05	ամինոֆիլին aminophylline	68 000
62	33651128/1	նիտրոֆուրանտոյին j01xe01	նիտրոֆուրանտոին, nitrofurantoin	31 360
86	33661117/1	կատվախոտի հանուկ N05CM09	կատվախոտի թանձր հանուկ valerian thick extract	92 160
Ընդամենը				191 520

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ տնօրեն

Մ. ՄԱՑԱԿՅԱՆ